Հաստատում եմ՝

Երևանի <<Արգենտինյան Հանրապետություն>>

հ. 76 հիմնական դպրոցի տնօրեն՝ Ն.Ադամյան

01.09.2023թ.հր.հ.62-Ա

Երևանի <<Արգենտինյան Հանրապետություն>>

հ. 76 հիմնական դպրոցի 2023-2024ուստարվա

դաստիարակչական աշխատանքի տարեկան ծրագիր

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով

տնօրենի տեղակալ՝ Ա.Մնացականյան

Հաստատում եմ՝

Երևանի <<Արգենտինյան Հանրապետություն>>

հ. 76 հիմնական դպրոցի տնօրեն՝ Ն.Ադամյան

01.09.2023թ.հր.հ.62-Ա

Երևանի <<Արգենտինյան Հանրապետություն>>

հ. 76 հիմնական դպրոցի 2023-2024ուստարվա

դաստիարակչական աշխատանքի տարեկան ծրագիր

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով

տնօրենի տեղակալ՝ Ա.Մնացականյան

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Օգտվել ժողովրդավարական հարաբերություններից, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա, բարելավել դասի դաստիարակչական կողմը:
2. Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք:
3. Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքային համակարգի ձևավորմանը:
4. Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք, արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համատեղ աշխատանք ղեկավար անձնակազմի հետ:
2. Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ:

ա/ Դասղեկների հետ տարվող աշխատանք:
բ/ Ուսուցիչների հետ տարվող աշխատանք:
գ/ Աշխատանք սովորողների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպչի հետ:

3. Մասնագիտացված կրթական աջակցություն:

ա/ Աշխատանք դպրոցի հոգեբանի հետ:

4. Աշխատանք աշակերտական կոլեկտիվի հետ:
ա/ Աշխատանք աշակերտական խորհրդի հետ:
բ/ Աշխատանքներ երեխաների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով, ծնողազուրկ, վարքի շեղում ունեցող, շնորհալի երեխաներ):

5. Աշխատանք ծնողական խորհրդի և ծնողական համայնքի հետ:

6. Աշխատանք սպասարկող անձնակազմի հետ:
ա /Աշխատանք գրադարանավարի հետ:
բ/ Աշխատանք բուժքրոջ հետ:

7.Համադպրոցական և արտադպրոցական միջոցառումների պլանավորում և կազմակերպում:

8 .Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

9. Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպուում և վերահսկում:

10.Աշխատանք համայնքի իրավապահ մարմինների աշխատակիցների հետ:

11.Աշխատանք սովորողների համակողմանի զարգացման ուղղությամբ:

ա/ Հայրենագիտական և հայեցի դաստիարակություն:

բ/ Հոգևոր, գեղագիտական, բարոյական, էկոլոգիական, իրավական, քաղաքացիական դաստիարակություն:

գ/ Ֆիզիկական դաստիարակության և առողջապահական միջոցառումներ:

12.Աշխատանք հիմնական պարտադիր կրթության իրականացման ուղղությամբ:

13.Աշխատանք սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:

14.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանք:

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԿԱԶՄԻ ՀԵՏ

Հ.	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլուծություն
1.	Աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:	Օգոստոս	Տնօրեն Ա.Մնացականյան	
2.	Ընթացիկ հանձնարարականների,աշխատանքների կատարում և համագործակցում:	Ընթացքում	Ա.Մնացականյան	
3.	Դասալսումների համաձայնեցում և պլանավորում:	Ընթացքում	Ա.Մնացականյան Ուսմասվար	
4.	Համագործակցություն դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ:	Ընթացքում	Ա.Մնացականյան Տնտեսվար	
5.	Համագործակցություն դպրոցի բուժքրոջ և գրադարանավարի հետ:	Ընթացքում	Ա.Մնացականյան Բուժքույր,գրադարանավար	

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՀԵՏ

Հ.	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլուծություն
1.	Կազմակերպչի հետ համատեղ մշակել տարեկան աշխատանքային ծրագիր և ներկայացնել տնօրենի հաստատմանը:	Օգոստոս	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան	

2.	Մեթոդական օնություն ցույց տալ կազմակերպչին ամենօրյա աշխատանքները կազմակերպելիս:	Մշտապես	Ա.Մնացականյան	
3.	Աշակերտական խորհրդի աշխատանքների համատեղ պլանավորում և վերահսկում:	Մշտապես	Ա.Մնացականյան	
4.	Լսել հաշվետվություններ կատարած աշխատանք ների մասին:	Դեկտեմբեր, մայիս	Ս.Քարտաշյան	
5.	Աջակցել կազմակերպչին ներկայանալու առաջարկություններով և օգնել դրանք իրականացնելու գործում:	Մշտապես	Ա.Մնացականյան	
6.	Համատեղ աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի,վարվեցողության նորմերի և կանոնների պահպանման ուղղությամբ:	Մշտապես	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան	
7.	Համատեղ հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ:	Մշտապես	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան	
8.	Համատեղ կազմակերպել սովորողների հանգիստն ու ազատ ժամանցը:	Մշտապես	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան	

ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլու-ծություն
1.	Պատրաստել մեթոդական օգնություն՝ նվիրված դասղեկների գործունեության և դասղեկների աշխատանքի կազմակերպմանը, օգնել դասղեկների աշխատանքային պլանների մշակմանը և ներկայացնել մանկավարժական խորհրդի և տնօրենի հաստատմանը:	Օգոստոսի 23-ին	Ա. Մնացականյան	
2.	Անցկացնել դասղեկների սեմինար-խորհրդակցություն՝ նվիրված դասղեկական աշխատանքին,դասղեկի պարտականություն-ներին:	Օգոստոսի 25-ին	Ա. Մնացականյան	
3.	Կազմել դասղեկի ժամերի կարգացուցակ և անցկացնել դասա-լսումներ և մշտադիտարկումներ:	Ամեն ամիս	Ա. Մնացականյան	
4.	Անցկացնել դասվար-դասղեկների սեմինար խորհրդակցություն-ներ՝ նվիրված սովորողների դաստիարակության ուղղություն-ներին:	2 ամիսը մեկ անգամ	Ա. Մնացականյան	
5.	Կազմակերպել դասղեկների աշխատանքի ուսումնասիրություն-ներ և նպաստել լավագույնների աշխատանքի փորձի տարած-մանը:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան	
6.	Ուսումնասիրել և բացահայտել դասղեկների աշխատանքում տեղ գտած թերություններն ու գործնական օգնություն ցույց տալ դրանց վերացման ուղղությամբ:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
7.	Դասղեկների սեմինար-խորհրդակցություններում լսել հաշվետ-			

	Վություններ դասղեկների կատարած աշխատանքների մասին:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
8.	Հայտորոշիչ աղյուսակի միջոցով ուսումնասիրել դասղեկների մասնագիտական պատրաստվածությունը և դասղեկի գործունեության արդյունավետությունը:	Պարբերաբար	Ա.Մնացականյան	

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլուծություն
1	Հրավիրել դասարանական ժողովներ, ընտրել ծնողական խորհրդի անդամներ և նախագահներ:	Սեպտեմբերի 1-ից 8-ը	Ա. Մնացականյան, դասղեկներ, դասվարներ	
2.	Կազմակերպել ծնողական ընդհանուր ժողով և քննարկել ծնողական խորհրդի հաշվետվությունը 2022-2023ուստարվա կատարած աշխատանքների մասին և հաստատել ծնողական խորհրդի նոր կազմը: Ծնողներին ծանոթացնել խորհրդի կանոնադրությանը:	08.09.2023թ.	Ա. Մնացականյան Ծնողական խորհուրդ	
3.	Անցկացնել ծնողական խորհրդի նիստ և ընտրել խորհրդի նախագահ:	11.09.2023թ.	Ա. Մնացականյան Ծնողական խորհուրդ	
4.	Համակարգել դպրոցի ծնողական խորհրդի և դասարանների ծնողական խորհուրդների աշխատանքը:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան	
5.	Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողովներ և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր:	Տարվա ընթացքում	Տնօրենություն, Ա. Մնացականյան Ծնողական խորհուրդ	

6.	Ծնողական խորհրդի հետ համատեղ կազմակերպել սովորողների կենցաղային պայմանների ուսումնասիրություններ, հետևել սովորողների արտաքին տեսքին և անձնական հիգիենային:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան, Ծնողական խորհուրդ, դասղեկներ	
7.	Դասարանների ծնողական խորհուրդների հետ համատեղ ճշտել սոցիալապես անապահով, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, ամուսնալուծված ծնողների, բազմանդամ ընտանիքների երեխաների ցուցակները և համապատասխան աշխատանք տանել նրանց օգնելու ուղղությամբ:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան Ծնողական խորհուրդ	
8.	Ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը բազմաբնույթ միջոցառումներին և դպրոցի ներքին գնահատման աշխա-տանքներին:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան Ծնողական խորհուրդ	
9.	Նպատակային օգտագործել ծնողական խորհրդի և ծնողական համայնքի ուժերը սովորողների հիմնական պարտադիր կրթություն իրականացնելու ուղղությամբ:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան Ծնողական խորհուրդ	

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլու-ծություն
1	Անցկացնել նոր ուսումնական տարվա առաջին աշակերտական ընդհանուր ժողովը, որի ընթացքում ընտրել դպրոցի աշա-	Սեպտեմբերի 1-ին շաբաթ	Ա. Մնացականյան Ս.Քարտաշյան	

	կերտական խորհրդի և դասարանական ինքնավարության մարմինների ընտրություններ կազմակերպող նախաձեռնող խումբ `8-9-րդ դասարաններից:			
2	Անցկացնել դասարանական ընդհանուր ժողովներ և ընտրել դասարանական խորհուրդներ:	Սեպտեմբերի 2-րդ շաբաթ	Դասղեկներ Ս.Քարտաշյան	
3	6-9-րդ դասարանների ներկայացուցիչներից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել Աշակերտական խորհուրդ:	Մինչև սեպտեմբերի 13-ը	Ա. Մնացականյան Ս.Քարտաշյան	
4	Ընտրել Աշակերտական խորհրդի նախագահ:	Մինչև սեպտեմբերի 20-ը	Ա. Մնացականյան Աշակերտական խորհուրդ Ս.Քարտաշյան	
5	Ներկայացնել աշակերտական խորհրդի կանոնադրությունը:	Սեպտեմբեր	Ա. Մնացականյան Ս.Քարտաշյան	
6	Օգնել Աշակերտական խորհրդին ուսումնադաստիարակչական, ռազմամարզական, սոցիալական, մշակութային, տեղեկատ-վական հանձնախմբեր ստեղծելու, նրանց գործունեությունը կազմակերպելու ուղղությամբ:	Սեպտեմբեր	Ա. Մնացականյան Ս.Քարտաշյան	
7	Կազմակերպել արտադասարանական աշխատանքի գծով ակտիվի ուսուցում:	Սեպտեմբերի26-ին	Ա. Մնացականյան Ս.Քարտաշյան	

8	Լսել հաշվետվություններ հանձնախմբերի կատարած աշխատանքների մասին և օգնել տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ:	Ընթացքում	Ա. Մնացականյան Ս.Քարտաշյան	

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլու-ծություն
1.	Գրադարանի հետ համատեղ անցկացնել գրքի պրոպագանդա, սովորողների արտադասարանական ընթերցանություն, կազմա-կերպել հանդիպումներ գրողների, հանրապետության անվանի մարդկանց հետ:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան, գրադարանավար	
2	Ճշտել պահանջվող դասագրքերի քանակը և ըստ դասարանների հայտ ներկայացնել:	Օգոստոսի 25-ին	Ա. Մնացականյան, դասղեկներ, Մ.Սիմոնյան	
3	Կազմակերպել նոր դասագրքերի բաշխումը՝ըստ դասարան-ների:	Օգոստոսի 29-ին	Ա. Մնացականյան, դասղեկներ, Մ.Սիմոնյան	
4.	Կազմակերպել տարբեր տոներին նվիրված հանդեսներ:	Ընթացքում	Ա. Մնացականյան Մ.Սիմոնյան	
5.	Հետևել դասագրքերի պահպանմանը, ճշտել գրադարանին պարտք ունեցող աշակերտների ցուցակը և միջոցներ ձեռնար-կել, որ կարճ ժամանակում գրքերը վերադարձվեն գրադարան:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ, Մ.Սիմոնյան	

6.	Գրադարանը տարբեր գրքերով համալրելու ուղղությամբ բացատրական աշխատանք տանել սովորողների շրջանում:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ, Մ.Սիմոնյան	
7.	Կազմակերպել համատեղ միջոցառումներ՝ նվիրված հայ գրող-ների ստեղծագործություններին,անցկացնել գրքերի քննարկում-ներ:	Ընթացքում	Ա. Մնացականյան, Մ.Սիմոնյան	
8.	Կազմակերպել <<Գրքի վերանորոգման օր>> և մաշված գրքերը վերանորոգել:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ, Մ.Սիմոնյան	
9.	Կազմակերպել միջոցառում<<Ճանաչենք մեր ազգային ժառանգությունը>>խորագրով՝նվիրված Թարգմանչաց տոնին:	Հոկտեմբեր	Մ.Սիմոնյան	
10.	Կազմակերպել Գիրք նվիրելու և Մայրենիի օրերին նվիրված միջոցառումներ, ընթերցանության և ասմունքի մրցույթներ:	Փետրվար	Ա. Մնացականյան դասղեկներ, դասվարներ, Մ.Սիմոնյան	

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլու-ծություն
1.	8-9-րդ դասարաններում զրույցներ անցկացնել տարբեր մասնա-գիտությունների վերաբերյալ և օգնել երեխաներին ճիշտ կողմ-նորոշվելու մասնագիտության ընտրության հարցում:	Պարբերաբար	Ա. Մնացականյան Դասղեկներ	
2.	Ձևավորել մասնագիտական կողմնորոշման խմբակ:	Սեպտեմբեր	Տնօրենություն	

3.	Կազմակերպել հանդիպումներ տարբեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
4.	Սովորողներին տեղյակ պահել տարբեր ուսումնական հաստատությունների վերաբերյալ դպրոց ներկայացվող ընդունելության հայտագրերի մասին:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
5.	8-9-րդ դասարաններում մասնագիտությունների ընտրության վերաբերյալ անցկացնել հարցումներ:	Պարբերաբար	Ա. Մնացականյան	
6.	Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ անցկացնել <<Ճառ>>խորագրով հարցաշարային աշխատանք:	Մայիս	Հոգեբան	
7.	Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ 9-րդ դասարանցիների շրջանում անցկացնել Կլիմովի թեստը:	Մայիս	Ա. Մնացականյան	

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլուծություն
1.	Ամրապնդել կապը քաղաքի տարբեր սպորտային և մշակութային հիմնարկների հետ և ակտիվ մասնակցություն ցուցաբերել նրանց կողմից կազմակերպվող միջոցառումներին:	Մշտապես	Ա. Մնացականյան	
2.	Աշխատանքներ տանել համայնքի մշակութային հաստատությունների և դպրոցի միջև կապեր հաստատելու ուղղությամբ:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
3.	Ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունը Խնկո-Ապոր	Ընթացքում	Ա. Մնացականյան	

	գրադարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին:			
4.	Մասնակցել համաքաղաքային միջոցառումներին:	Ընթացքում	Ա. Մնացականյան	

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլուծություն
1.	Խմբակները կոմպլեկտավորելիս հաշվի առնել երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, դպրոցի դաստիարակչական համակարգի խնդիրներն ու նպատակները,աշակերտների ու նրանց ծնողների կարծիքները:	Օգոստոս	Տնօրենություն Ա. Մնացականյան	
2.	Կազմակերպել արտադասարանական հետևյալ խմբակները. ա. երգչախումբ բ.բանավոր խոսքի զարգացում/ռուսերեն, անգլերեն,իսպաներեն/: գ.<<Մասնագիտական կողմնորոշում >> դ.<< Մշակույթի պատմություն>>	Օգոստոս	տնօրենություն Ա. Մնացականյան	
3.	Խմբակների գործունեությունը կազմակերպել `ըստ վերադասից երաշխավորված խմբակների աշխատանքային տարեկան ծրագրերի:	Օգոստոս	Ա. Մնացականյան	

4.	Կազմել կարգացուցակ և հետևել խմբակների պարապ-մունքներին:	Ամեն ամիս	Ա. Մնացականյան	
5.	Օգնել խմբակների աշխատանքում տեղ գտած թերությունների վերացմանը:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան	
6.	Արտադասարանական աշխատանքը կազմակերպել՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկություն-ները, հետաքրքրությունները:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
7.	Կազմակերպել խմբակների հաշվետու միջոցառումներ, ցուցահանդեսներ:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան, խմբակների ղեկավարներ	

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքիբովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլու-ծություն
1.	6-ից 14 տարեկան երեխաների հաշվառում անցկացնելու նպատակով ուսուցիչներին կցել դպրոցին հարող տարածքի շենքերին:	Օգոստոսի 11-ից 25-ը	Ա. Մնացականյան, դասղեկներ,կցված ուսուցիչներ	
2.	Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացած պատանիներին ու աղջիկներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ:	ընթացքում	Ա. Մնացականյան, կցված ուսուցիչներ	

3.	Խիստ վերահսկողություն սահմանել ուշացումների ու անհարգելի բացակայությունների նկատմամբ:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան դասղեկներ, Ս.Քարտաշյան	
4.	Պարտադիր ուսուցման իրականացմանը մասնակից դարձնել դպրոցի ծնողական համայնքին և ծնողական խորհրդին:	Տարվա ընթացքում	Ա. Մնացականյան, դպրոցի ծնողական խորհուրդ	
5.	Ուշադրության կենտրոնում պահել անհատական աշխատանք պահանջող աշակերտներին, բացատրական զրույցներ անցկացնել վարքի շեղում ունեցող երեխաների հետ, նրանց ընդգրկել արտադասարանական խմբակներում և կազմակերպ-վող միջոցառումներում:	Մշտապես	Ա. Մնացականյան դասղեկներ	

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլու-ծություն
1.	Աշակերտներին բացատրել մարդկության գոյության իմաստը, արժևորել պատմական անցյալի և ապագայի դերը աշակերտների բարոյական հատկանիշների ձևավորման գործում:	Ընթացքում	Դասղեկներ	
2.	Աշակերտների մոտ իրենց անձի նկատմամբ հետաքրքրություն և կատարելագործման ցանկություն առաջացնել:	Ընթացքում	Դասղեկներ	
3.	Զարգացնել աշակերտների կամային հատկանիշները, ձևավորել սեփական անձի թույլ կողմերի նկատմամբ	Ընթացքում	Դասղեկներ	

	քննադատական մտածողություն:			
4.	Երեխաներին ծանոթացնել ազգային ավանդույթներին, հոգևոր արժեքներին:	Ընթացքում	Դասղեկներ	
5.	Ձևավորել աշակերտների ինքնուրույն գործելու,ինքնաճանաչողության, ինքնակառավարման,վերլուծողական մտածողության, անսովոր պայմաններում ինքնուրույն որոշումներ ընդունելու կարողություններ և պատասխանատու վարք:	Ընթացքում	Ա.Մնացականյան, Ս.Քարտաշյան դասղեկներ	
6.	Երեխաների մոտ ցանկություն առաջացնել իմանալու, հասկանալու, իրական կյանքում և իրավիճակներում կիրառելու ձեռք բերած բարոյական արժեքները:	Ընթացքում	Ա.Մնացականյան, Ս.Քարտաշյան դասղեկներ	
7.	Աշակերտների մոտ դաստիարակել ծանր իրավիճակներում պայքարելու և դիմակայելու կարողություն:	Ընթացքում	Ա.Մնացականյան, Ս.Քարտաշյան դասղեկներ	
8.	Դրական վերաբերմունք ցուցաբերել ընտանեկան սովորույթների, ազգային ավանդույթների նկատմամբ, աշխատանք տանել դիմացինին լսելու, ընկալելու ունակություն և հետևություններ անելու հմտություններ ձևավորելու ուղղությամբ:	Ամենօրյա աշխատանքում	Ա.Մնացականյան, Ս.Քարտաշյան դասղեկներ	
9.	Աշակերտների կամային հատկանիշները զարգացնելու ուղղությամբ անցկացնել ինքնազարգացման գործնական աշխատանքներ:	Նոյեմբեր	Ս.Քարտաշյան դասղեկներ	
10.	Երեխաների մեջ ձևավորել հիվանդներին և թույլերին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու և բարեգործությամբ զբաղվելու ցանկություն:	Ամենօրյա աշխատանքում	Ա.Մնացականյան, Ս.Քարտաշյան դասղեկներ	
11.	Ուսումնասիրել աշակերտների բարոյական արժեքները, անցկացնել դասղեկական ժամեր՝ նվիրված բարոյական խնդիրներին և տարիքային փուլերին:	Ընթացքում	Դասղեկներ	

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլու-ծություն
1	Համագործակցել դպրոցի բժշկի հետ՝ աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակն ուսումնասիրելու նպատակով:	Յուրաքանչյուր ամիս	Դպրոցի բժիշկ, դասղեկներ	
2	Սովորեցնել՝ ինչ է առողջ ապրելակերպը, երեխաների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտի նկատմամբ:	Ընթացքում	Դասղեկներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	
3	Ուսման գործընթացում ուսումնասիրել աշակերտների ծանրաբեռնվածությունը:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
4	Անցկացնել զրույցներ սանիտարահիգիենիկ պահանջների, անձնական հիգիենայի վերաբերյալ, աշակերտներին բացատրել ալկոհոլի, նիկոտինի, թմրանյութերի, ՁԻԱՀ-ի հետևանքները մարդու օրգանիզմի վրա:	Ընթացքում	Ա.Մնացականյան, Ս.Քարտաշյան դասղեկներ	
5	Համագործակցել արտադպրոցական բուժհաստատությունների հետ՝ մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով:	Ընթացքում	Դպրոցի բժիշկ, դասղեկներ	
6	Կազմակերպել երեխաների ֆիզիկական զարգացման և առողջության պահպանման ակտիվ միջոցառումներ՝ մրցումներ, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ,արշավներ:	Ընթացքում	Դասղեկներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	

7.	Ուսումնասիրել աշակերտների ծանրաբեռնվածությունը և նրա ազդեցությունը աշակերտների առողջության վրա:	Ընթացքում	Ա. Մնացականյան դպրոցի բժիշկ, դասղեկներ	
8.	Անցկացնել քննարկումներ սանիտարահիգիենիկ պահանջների, տնային ախատանքների չափաքանակի նորմաների պահպանման վերաբերյալ:	Ընթացքում	Դպրոցի բժիշկ, դասղեկներ	
9.	Համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ,ներգրավել նրանց ծնողների և երեխաների համար կազմակերպվող խորհրդատվություններին՝կապված երեխաների ֆիզիկական առողջության պահպանման խնդիրներին:	Ընթացքում	Դասղեկներ	

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Հ.	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլուծություն
1.	Սոցիալապես անապահով երեխաների բացահայտում և հաշվառում:	Սեպտեմբեր	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ	
2.	Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:	Մշտապես	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ	
3.	Անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում:	Սեպտեմբեր	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ	
4.	Անցանկալի վարքի պատճառների ուսումնասի-	Մշտապես	Ա.Մնացականյան	

	րում և աշխատանքների պլանավորում:		Ս.Քարտաշյան Դասղեկներ	
5.	Հակահիրավական վարք ունեցող երեխաների հետ տանել բացատրական աշխատանք,նրանց մասնակից դարձնել կազմակերպվող միջոցառումներին:	Մշտապես	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ Հոգեբան	
6.	Անհատական զրույցներ անցկացնել առավել ակ-տիվ երեխաների հետ:	Մշտապես	Ա.Մնացականյան	
7.	Երեխաներին ակտիվորեն մասնակից դարձնել Դան Ուլվեուսի<<Ընդդեմ բուլինգի և հակասո-ցիալական վարքի>>,<<Աշխարհին առանց թա-փոնների>> ծրագրերին:	Ուստարվա ընթացքում	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ	
8.	Աշխատանքներ տանել կյանքի դժվարին պայ-մաններում հայտնված երեխաներին բացահայ-տելու և նրանց օգնելու ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ	

ՍՈՎՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Հ.	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Վերլուծություն
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ,ԲԱՐՈՅԱԿԱՆ,ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ			
1	Երեխաների մոտ ձևավորել մարդասիրական աշխարհայացք, սեփական իրավունքների գիտակցում, բարոյական դիրքորոշում,պատասխանատվություն և արժանապատվություն, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ:	Յուրաքանչյուր ամիս	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ	
2.	Զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են կամավորությունը, համագործակցությունը, հանդուրժողականությունը, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը, բանավիճելու հըմտությունը:	Ընթացքում	Ա.Մնացականյան Ս.Քարտաշյան Դասղեկներ	
3.	Համագործակցել իրավապահ մարմինների հետ: Կազմակերպել հանդիպումներ ՆԳ աշխատակիցների հետ:	Ընթացքում	Ա. Մնացականյան	
4.	Կազմակերպել մրցույթներ իրավական թեմաներով: Անցկացնել բանավեճ՝ «Ես ունեմ իրավունք» թեմայով:	Մարտ	Ա. Մնացականյան, դասղեկներ	
5.	Հարգանքի ձևավոևում մեծերի, ծնողների ,ուսուցիչների հանդեպ:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ	
6.	Երեխաներին սովորեցնել իրենց իրավունքներն ու պարտականությունները:	Ընթացքում	Դասղեկներ	

	ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՈՒՆ			
1.	Այց Եռաբլուր պանթեոն և ծաղիկների խոնարհում զոհված հերոսների հուշաքարին:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ	
2.	Կլոր սեղան՝ <<Մենք ենք մեր երկրի տերն այսօր և ապագայում>>խորագրով:	Ընթացքում	Ա. Մնացականյան դասղեկներ	
3.	Երեխաներին մասնակից դարձնել տարհանմանը, կազմա-կերպվող ռազմամարզական խաղերին և Արիության դասերին:	Ընթացքում	Ա. Մնացականյան դասղեկներ,զինղեկ	
4.	Անցկացնել դասղեկի ժամեր՝հայրենասիրության և հայոց բանա-կի պատմությանը նվիրված թեմաներով:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ	
5.	Երեխաների մոտ ձևավորել կամք, արիություն, զգոնություն, պատրաստակամություն՝ ծառայելու հայոց բանակում:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
6.	Կազմակերպել հանդիպումներ ռազմական հաստատությունների ներկայացուցիչների հետ:	Ընթացքում	Ա. Մնացականյան, զինղեկ	
	ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ			
1.	Նշել եկեղեցական տոները: Այց հին եկեղեցիներ և Էջմիածնի թանգարան:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
2.	Կազմակերել շնորհալի երեխաների աշխատանքների ցուցա-հանդեսներ:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
3.	Աշակերտների մոտ սեր և հարգանք սերմանել քրիստոնեա-կանարժեքների նկատմամբ, ծանոթացնել նրանց իրենց հոգևոր	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
	ժառանգությանը, կարևորել հայապահպանության գործում եկեղեցու ունեցած դերը:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
4.	Այց մշակութային օջախներ, համերգների ,ներկայացումների, ֆիլմերի դիտումներ:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
5.	Երեխաների մոտ սեր արթնացնել դասական և ժողովրդական երաժշտության նկատմամբ,ապահովել երեխաների մասնակ-ցությունը Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերվող ուսուցողական համերգներին:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ	
6..	Անցկացնել զրույցներ գեղեցիկի, արվեստի տարբեր ճյուղերի մասին:Նպաստել գեղեցիկի հետ երեխաների ամենօրյա շըփ-	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	

	մանը:			
7.	Այցելություններ պատմաճարտարապետական օջախներ, գրողների և արվեստագետների տուն-թանգարաններ,Մատենադարան:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
8.	Իրագործել ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող <<Դպրոցական բաժանորդային համակարգ>>ծրագիրը:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ	
	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	Ընթացքում		
1.	Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքն ու աշխատավոր մարդը,զարգացնել աշխատանքի անհրաժեշտության և պահանջի գաղափարը:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
2.	Ապահովել աշակերտների մասնակցությունը դասարանի,դըպրոցի տարածքի մաքրման աշխատանքներին,կազմակերպվող շաբաթօրյակներին, թղթի թափոնի և պլաստիկե իրերի հավաքման ,դասագրքերի նորոգման աշխատանքներին:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
3.	Սովորողների մոտ զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, նրանց մասնակից դարձնել ծառատունկերին, դպրոցում անցկացվող <<Աշխարհն առանց թափոնների>>ծրագրին:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	
4.	Կազմակերպել այցեր ՀԲՊ թանգարան,բուսաբանական այգի:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկներ	
5.	Անցկացնել զրույցներ բնական աղետների և նրանց հետևանքների մասին:	Ընթացքում	Ա. Մնացականյան, դասղեկնե ր	

Մասնագիտացված կրթական աջակցություն

Հ.	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու**	**Վերլուծություն**
1.	Հոգեբանի տարեկան պլանի քննարկում՝ուղղված ծնողների	Սեպտեմբեր	Ա.Մնացականյան	

	հետ տարվող աշխատանքին:			
2.	Հետևողական աշխատանք տանել սովորողների համընդ-հանուր ներառման , ԿԱՊԿ ունեցող երեխաներին դպրոցի միջոցառումներին մասնակից դարձնելու ուղղությամբ:	Ընթացքում	Ա.Մնացականյան	
3.	Ամենօրյա օգնություն ցուցաբերել մասնագիտացված աջակցու-թյունների ուղղությամբ ծնողների հետ անցկացվող համատեղ աշխատանքում:	Ընթացքում	Ա.Մնացականյան	
4.	Կատարված աշխատանքի վերլուծություն,քննարկում և գնահատում:	Ընթացքում	Ա.Մնացականյան,	
5.	Անցկացնել անհատական պարապմունքների դասալսումներ և օգնություն ցուցաբերել դժվարությունների դեպքում:	Ընթացքում	Ա.Մնացականյան	

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հ.	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու**	**Վերլու-ծություն**
1.	Աջակցել հասարակական կամ միջազգային կազմակերպու-թյունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների,դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը:	Մշտապես	Ա.Մնացականյան	
2.	Համագործակցել <<Հույսի կամուրջ>>,<<Իմ դպրոցը >>,<<ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ>> և այլ հասարակական կազմակերպությունների հետ:	Մշտապես	Ա.Մնացականյան	
3.	Կազմակերպել համատեղ միջոցառումներ հասարակական կազմակերպությունների հետ:	Մշտապես	Ա.Մնացականյան	
4.	Երեխաներին ընդգրկել հասարակական կազմակերպություն-ների կողմից կազմակերպվող ազգանպաստ ակցիաներին:	Մշտապես	Ա.Մնացականյան	